որի մասին ծերերն ասում էին, թէ Լալա փաշան ռումբով է կործանել: Այլեւս համբերութիւնս հատած՝ ցանկանում էի ժամ առաջ Արդանուշ հասնել: Ինձ կարսում պատմել էին, որ պապիս-պապը Խաչատուր Կարադեօղեանը Դաւիթ Բէգի խժդժութիւնների ժամանակ թողել էր Ղարաբաղը, գաղթել էր Կլարջէթի Սոլիան գիւղը 1725 թ. շէնցրել ու ապրել: Ապա երբ երկու մեծ որդիքը Արդանուշի գիւղերից երկու Իսլամ աղջիկ էին փախցրել եւ ամբողջ դաւառի մոլլաների հալածանքին էին մատնել, իսլամացել էին, հաստատուել Սոլիանում. պապիս-պապը հաւաքել էր մնացածներին, կին, աղջիկ ու տղայ, գնացել, հաստատուել էր Արդանուշում: Այստեղ եօթնամեայ տղային՝ Լեւոնին մկրտելիս, վերջինս տաշտից փախչում է արարողութեան ժամանակ, որով Արդանուշցիները անուանել էին — Տաշտից փախչողենց տունը — (թէքնէդէն կաշան): Այս մտքերով ալէծուի հասանք Մէյդան-Արդանուշի ստորոտում մեր ջաղացքը: Կեանքիս մէջ առաջին անգամ մեր թթենոցում թութ թափեցին, ժողովեցի ու կերայ: Ապա բարձրացանք սոսկալի զառիվերը, հասանք աւանի բեղենիս (պարիսպ) եւ բերդի երկաթէ դռնով ներս մտանք Արդանուշ:

Կարսի եւ Արդանուշի մեր տների դանդաղութիւնը խիստ նկատելի էր, չտեսած-